

ՊԵՏՐՈՍ ԴԻ ՍԱՐԳԻՍ ԳԻԼԱՆԵՆՑ

(Պատմական-կենսագրական ակնարկ)

Հայոց նոր պատմութեամբ հետաքրքրւողները յիշում են անցուշտ այս մարդու անունը. Պետրոս դի Սարգիս Գիլանենցն այն իսկ անձնաւորութիւնն է, որ 1720-ական թուականների սկզբին Պարսկաստանի ժամանակակից անցքերի ու դրանց ընթացակից հայոց քաղաքական շարժման մասին օրագրի ձեռվ կազմած մի ընդարձակ տեղեկագիր ուղարկեց ոռւսաց քաղաքական շրջաններում ծանօթ հայ գործիչ Մինաս վարդապետին և Գիլանի ոռւս կառավարիչ քրիզադիր Լեվաշեվին^{*)}:

Օրագրողի անձնաւորութեան մասին մի քանի ակնարկ գտնում ենք միայն նրա թողած պատմական յիշատակացանի վերջին հատուածում: Աւելի մօտ հասկացողութիւն են տալիս մեզ նրա մասին մեր ձեռքի տակ եղած մի քանի անտիպ գրութիւններ, որ մինչ այժմ դեռ չեն դարձել յատուկ ուսումնասիրութեան նիւթ: Գիլանենցն այստեղ դէպքերի արձանագրող չէ արդեն, այլ նրանց մէջ մասնակցող կենտրոնական դէմք. նրա անունը կապւում է այստեղ ժամանակի քաղաքական-ռազմական ձեռնարկների հետ: Թղթերի մէջ զեկուցանողը ինքը Գիլանենցը չէ այլևս, այլ նրան գործակից մարդիկ ու նրան հովանաւորող Մինաս վարդապետը, հայոց քաղաքական շարժման մէջ նշանաւոր դէմքերից մէկը: Սակայն չը պէտք է

^{*)} «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի չուղայեցւոց բարբառով դրած»: («Կոռևնկ Հայոց Աշխարհին», 1863. էջ 81—112 և 181—212).—Հմմ. «Дневникъ осады Испагани Афганами, веденный Петросомъ ди Саркисъ Гиланенцъ. въ 1722 и. 1723 годахъ. Материалы для истории Персії. Переводъ и объясненія К. Патканова, (Приложение къ XVII-му тому Записокъ Имп. Акад. наукъ. № 3. pp. XXXII+57). СПБ. 1870. Պատմական դրականութեան մէջ Գիլանենցին ուշադրութեան են առել Թզօվъ «Снош. Пет. Вед. съ арм. народомъ» СПБ. 1898. Введеніе LXI—LXIII և լէօ «Հայկական տպագրութիւն» Թիֆլիս 1901. Բ. տպ. էջ. 329 և հետ.

մոռանանք և այն, որ այդ թղթերը մեծ մասամբ գրուած են Գիլանենցի մասնաւոր նամակների ու զեկուցագրերի հիման վրայ: Այդ տեսակետից իսկ նրանք ներկայանում են մեզ, որպէս նրա ընդարձակ տեղեկագրի շարունակութիւնն ու ամփոփումը^{*)}:

* * *

Գիլանենցի գործունեութեան սկզբնական շցանը.

Քիչ բան կարող ենք ասել Գիլանենցի կեանքի և գործունէութեան սկզբնական շրջանի մասին: Այն հանգամանքը, որ նա գրում է նոր Զուղայի բարբառով ինքնին արդէն հաւանական է կացուցանում, որ նա ծնուած և դաստիարակուած պէտք է լինի Սպահանի նշանաւոր արուարձանում: Ազգանունը մատնում է մեզ թերևս նրա հեռաւոր նախորդների հայրենիքը, այն երկիրը, որ յետազայում պէտք է դառնար մեր հերոսի գործունէութեան

^{*)} Այստեղ յիշուած գրութիւնները պահուած են Մօսկ. Главн. Архивъ, Մին. Иностр. Дѣль. Дѣла ариянскія. 1725. № 1. ներբռյ. («Донашеніе Армянского Архиерея Минаса вартарапета о усиленѣйшей прозбѣ Армянского народа прислать къ нимъ начальника могущаго имъ руководствоваться по причинѣ, что главный ихъ начальникъ Пётръ Сергеевъ на баталіи убитъ.») Գործի մէջ գտնուած թղթերից կարեւոր են ա) Մինաս վարդապետի 1725 թ. 1-ն փետրուարի թուակիր մի զեկուցումը ցարին. (fol. 2 ր—3 ր.). բ) Կուրրատովի 1725 թ. ապրիլի 12-ի զեկուցումը արտաքին գործոց կոլեգիային Գիլանի գործերի համար Մինաս վարդապետի Մոսկուայից Պետրորուրդ գնալու ցանկութեան մասին (fol. 4 ր—5 ր). գ) Յովհաննէս (Иванъ.) անունով հայի Գիլանից Մինաս վարդապետին գրած 1725 թ. 17-ն յունուարի թուակիր նամակը. (fol. 9 ր—13 ր.) Այս նամակի հեղինակը, ինչպէս վկայում է Մինաս վարդապետը, եղել է Պետրոս Գիլանենցի գործակիցներից և նրա այն «լաւ և հաւատարիմ ընկերը, որին ինքն Պետրոսը վստահանում էր իր դադանիքները». նամակագիրն ինքը ամփոփում է իր դժբախտաբար միայն ոռւսերէն թարգմանութեամբ մեզ հասած գրութիւնը այս խօսքերով. «Все вышеписанное покойникъ Пётръ писалъ, а я съ того сie пишу якобъ кошю». (fol. 12 վ.). դ) Մինաս վարդապետի 1725 թ. 19-ն օգոստոսի թուակիր դիմումը կատարինէ Ա. կայսրունուն: (fol. 27 ր—28 վ.) Վերջին թղթով Մինաս վարդապետն ընթացք է տալիս նախորդ գրութեան մէջ արուած դիմումներին: Այդ թուղթը, որի մէջ խօսք կայ նաև Հայերի ընդհանուր քաղաքական ակնկալութիւնների մասին, զետեղում ենք սոյն յօդուածի յաւելուածում:

գլխաւոր կայանը։ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մի խաչքարի վրայ կայ յամենայն դէպս յիշատակութիւն, որ գալիս է ասելու, թէ նրա տոհմը հաստատուել էր այդտեղ դեռ Ժէ դարում և եղել է մէկը գաղութի ունեոր հայ տներից^{*)}։ Անշուշտ ինքը Պետրոսն էլ ապրուստի կարիք չէ ունեցել անցեալում։ Նրա հայրանուան Եւրոպականացած ձեզ, բաւականաչափ բնորոշ յատուկ ժամանակի ու շրջանի համար, վկայում է, թէ 1723 թուին նա արդէն աշխարհ տեսած մարդ էր, ունեոր վաճառական։ «Նրա գրելու ձեից իսկ, նկատում է Ք. Պատկանեանը, երեսում է, որ հեղինակը գրագէտ մարդ է, փորձուած, թէև չէ ստացել առանձին կրթութիւն։ Այն հանգամանքը, որ նա յաճախ գործ է ածում ոուսերէն վերս (верста), չին (չին), վօլնա (вольный), սուխարի (сухарь) և այլն բառերը, ապացուցանում է, որ նա եղել է Ռուսաստանում, եթէ չընդունենք, որ ոուսերէն բառերի գործածութիւնը այն ժամանակ սովորական էր պարսկահայերի մէջ^{**)}։ Պատկանեանի բերած բառերի գործածութիւնը օրագրի մէջ կարելի էր լինէր իհարկէ վերագրել նաև Գիլանում ապրող ոուս զինուորականների և պաշտօնեանների ազդեցութեանը, որոնց հետ հեղինակը մօտ և անսիջական շփման մէջ էր գտնւում։ Որ սակայն Գիլանենցը մինչ այդ եղել է Ռուսաստանում և նոյն իսկ Արևմտեան Եւրոպայում՝ դրա համար կան անմիջական տուեալներ։ 1716 թուին հանդիպում ենք նրան Ամստերդամում ժամանակի խոշոր հայ դէմքերից մէկի՝ Ղուկաս Վանանդեցու շրջանում։ Վանանդեցու այդ թուին լոյս տեսած «Պատկերասէր պատկերատեաց»ի խորագրի տակ կարդում ենք՝ «Նուիրագրեալ՝ և Տեառնագրեալ Զուղայեցի Գիլանէնց ի Տ՝ բ հանգուցեալ Սարգսի որդւոյ Պետրոսին»։ Դժբախտաբար Վանանդեցու

^{*)} Այդ խաչքարի վրայ կարդացւում է «Սուրբ Խաչս յիշատակէ գլնց Աւետիկն, թիվն ոճից յշտկէ սուրբ եկցս գլնց (Գիլանէնց) Աւետիկին՝ և կողակցաց Մարաթին՝ Ասլիջանին՝ և որդի Յակոբջանին»։ Տես, Տէր Յովհաննեան, Յար. «Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան»։ Նոր Զուղա, 1881. Բ. էջ. 6.

^{**)} «ՃԹԵՎԱԿԵ Ա. Տ. Ճ. առաջարան. էջ ՏՏIX—XXX.

այդ գիրքը յիշատակարան չունի, և մենք դժուարանում ենք ասել, թէ ինչու կամ ինչպէս է Գիլանենցն արժանացել նշանաւոր տպագրչի այդ ուշադրութեանը. բայց թէ յիրավի Գիլանենցն այդ ժամանակ հետաքրքրուում էր հայ գրքի վիճակով ու ըստ երևոյթին նաև մեկենաս էր հանդիսանում նրա տպագրութեան՝ եզրակացնել կարող ենք Ամստերդամից գրած նրա մի նամակից, որ նոյն տարին նա ուղղել է Ռուսաստանի նուիրակ Զուղայեցի Յովակիմ արքեպիսկոպոսին*). ահա և նրա տողերը՝

Գերապայծառ Տ' ն իմոյ յօվագիմ եպիսկոպոսիդ.

Յատ վեցի վերդ որ տ՝ եղիսէիցն ինդրեցի որ հ՝ ըմնցդ գրի որ լազաթ առես. վարպետ ղուկասին ծեռացայգիր նարեկն ու մին լավ գիրք որ մեր վարդայպետ՝ քշտին մաղրուլ լինի տաս էս գիր բերող թեօդօրօ վելքսին որ աղարկէ բանդիս ձեռն որ տեղս մին գիրք ամ պասմայ անում էն գրքին պէտք այ. կը խնդրեմ որ մաթլապիս կատարումն տաս և թողութիւն առես որ քանի քալմէս վրազ գրեցի. շալահ (իշալահ?) ա՞ծ նասիպութ մին էլ հըմնցդ ոտն համբուրեմ, ուրախ լեր ոլոչ ի տէր: Եղև ա՞մմսրդմ թիվն 1716 6/17 յուլիսի.

փոքր ծռ՝ ոտից հող չնչին

Պետրոս Գիլանենց.

Թւում է թէ Գիլանենցի ակնարկած գիրքը լոյս չէ տեսել ամենեին: 1717 թուին Ղուկաս Վանանդեցու տպարանից դուրս եկաւ Ամստերդամի վերջին հայերէն հրատարակութիւնը՝ «Կարճառօտ ժամագիրք ի մի վայր ժողովեալ ի պէտս Հայոց վաճառականաց» վերնադրով, մի դործ, որ անշուշտ ոչինչ աղերս չունի Գիլանենցին հետաքրքրող աշխատութեան հետ: Նոյն թուին մեռնում է Ղուկասը, և դրա հետ ի միասին ընդ միշտ փակւում է նրա տպարանի գործունէութիւնն Ամստերդամում**):

*) Մ. Գ. Ա. Մ. Ի. Դ. Ճելա արմ. 1720 օկտ. 31. № 3. fol. 109 թ.

**) Ղուկաս Վանանդեցու մահուան մասին Ռուսաստանի նուիրակ Յովակիմ արքեպիսկոպոսին տեղեկութիւն էր տուել Գիլանենցի նամակում յիշատակուած Ամստերդամի Եղիսէ հայ քահանան. և ահա թէ ինչ խօսքերով է պատասխանում վերջինիս Թովակիմ արքեպիսկոպոսը. «գրեալ էիր վ՝ Ղուկասին խղճութե-

թէ ուր դիմեց այնուհետև Գիլանենցը, չը գիտենք։ Հազիւ թէ տպագրական գործը բերած լինէր նրան Եւրոպա, և հաւանական էլ չէ, որ նոյն գործը երկար պահած լինի նրան այնտեղ։ Ամստերդամում նա անշուշտ երթևեկող մարդ էր. այստեղ գալիս էր նա առևտրական գործերով. «զրայ մենք սովորագար անք ելել ալիշ վէրիշի տէր», խոստովանում է տարիներ յետոյ Գիլանենցը*). նա մէկն էր ըստ երեսյթին այն խոշոր հայ առևտրականներից, որոնք Ամստերդամ էին բերում Գիլանի մետաքսը և՝ փոխանակելով այն հոլլանդական գործուածքների հետ՝ վաճառքի էին հանում այս ապրանքները Պարսկաստանի շուկաներում։ Եւ երեխ առևտրական այս ճանապարհորդութիւնների ժամանակ էլ նա ծանօթացաւ Մուկուայում Մինաս վարդապետի հետ ու սրա միջոցով՝ նաև ոռւսների հայկական քաղաքականութեանը։

* *

Հայ առեւտրականի վերաբերմունքը դէպի Պարսկաստանի քաղաքական շարժումները.

Հայ վաճառականի գործերը պէտք է շեղուէին իրանց խաղաղ ու կանոնաւոր ընթացքից, երբ արևելքում ըլունկուեց Աւղանների ապստամբութիւնը ու երկար տարիներով խանգարեց Իրանի գարաւոր հանգիստը։ Պարսկաստանն անզօր է հանդիսանում խեղդելու սաղմերի մէջ Միր Վայսի և Միր Մահմուտի խրոխտ ձեռնարկը. երկրի մի ծայրում առաջացած շարժումն աճում և տարածում է ամբողջ պետութեան մէջ. հետզհետէ ոտի են կանգնում լեզգիներն ու քուրդերը, արար ու թաթար ցեղերն ու վաղճանելն. գիտացիր նախ Թաթէոս երէցն. թէ զինչ էր գործեալ լուսահոգի Ռսկան վարդապետին հետ. առաւ հատուցումն որ առնց խոստովանութեան և հաղորդութեան վճարեաց զկեանն իւր. նմանապէս դա զինչ էր գործեալ Թօմայ վրդպատին հետ ըստ իւր առմանցն առաւ և դա։ Անդ. fol. 36. Բացասական որակում Ղուկասի անձնաւորութեան այստեղ մեզ առաջին անգամն է հանդիպում։

*) «Ժամանակագրութիւն», № 133, էջ. 211.

ցեղապետները։ Օգտուելով ապստամբական այս համատարած հրդեհից, ոռւս և տաճիկ զօրքերը շտապում են Պարսկաստան՝ իւրացնելու նրա զերծ մնացած ոլտառները, իսկ դրսի այս միջամտութիւնը տարտամ վիճակից հանում է Պարսկաստանի քրիստոնեայ ազգաբնակութեանը՝ վրացիներին և հայերին՝ և թե տալիս նրանց կենտրոնախոյս քաղաքական ձգտումներին։

Անկախ Հայաստանի ուրուականն առանձին աշխայժ է ստանում հայ մելիքների ու իւղբաշխների աւանդական իշխանութեան ստուերների տակ։ Վարդագոյն ապագայի յոյսերով Ղարաբաղի հայ մելիքները և Աղուանից կաթողիկոս Եսային իրանց զօրքերով դուրս են գալիս վրաց Վախտանգ թագաւորի առաջնորդութեամբ դիմաւորելու ոռւսների յաղթական մուտքը Պարսկաստան։ Ղափանի և շրջակայքի հայերի մէջ սկսում է խմորուել քաղաքականմի շարժում, որ յետագայում պէտք է կենտրոնանար Դաւիթ բէկի ապստամբական դրօշի շուրջը։ Կայիննակ այլ ուղղութեամբ մտածող և գործող դէմքեր։ Հայ ազնուականութեան շրջանում երեացին թրքանէր հոսանքի ներկայացուցիչներ։ Իսկ երկու տիրող ուղղութիւնների մէջ չէզոք դիրք էին աշխատում գրաւել էջմիածնի հայ վանականները։

Միանգամայն հեռու մնաց քաղաքական այս անցքերից ու դէպքերից հայ առևտրական դասը։ Զուրկ ազգային-քաղաքական երազանքներից՝ նա չունէր նակ իրական գործունէութեան որոշ ծրագիր։ Կրաւորական համակրանքներով նա յարում էր ինքնին տիրող քաղաքական-հասարակական կարգերին ու օրէնքներին, որոնց հետ շղթայուած էր իրաւական պահանջների և տնտեսական շահերի հաղար ու մի կապերով։ Եւ ի՞նչ կարող էր սպասել հայ վաճառականը ցեղային և գաւառական սկզբունքների տեսական յաղթանակից, եթէ ոչ քաղաքական խոշոր միութիւնների կազմալուծում և տնտեսական գործող կազմակերպութիւնների խանգարում և քայլայում միայն։ Զէ որ «յեղափոխական» այս շարժումն ըստ ինքեան դարերով ամբարուած յետաշարժ ոյժերի մի ժայթքում էր միայն՝

ուղղած քաղաքական-տնտեսական այն նոր կարգերի դէմ, որ սկսել էին արմատանալ Իրանի թագաւորութեան մէջ Սեֆիդեան հարստութեան տիրապետութեան ընթացքում։ Իզուր չէ հայ առևտրական Եղիա Մուշեղեանը, որը, որպէս «աճենթ», այսինքն փոխանորդ ժողովին արևելից և հնդկաց վաճառականաց», նստած Պարսկաստանի վաճառաշահ քաղաքներում ուշի ուշով հետևում էր երկրի անցքերին, տարիների ընթացքում վարած իր մասնաւոր թղթակցութիւնների մէջ սոսկումով արձանագրում ապստամբ ցեղերի ու նրանց վարիչների առաջընթացութեան փաստերը և ընդհակառակը՝ հիացումով նկարագրում պարսիկների յաջողութեան աննշան դէպքերն անգամ*). Եւ նա սիրում էր հաւատալ, թէ ճակատագիրը կը փրկէ Սեֆիների հարստութիւնը վերջնական կորստից։

Սակայն այդ յօյսերն օր աւուր սպառնում էին չքանալ անհետ։ Գետական այն մեքենան, որի յուսալի նեցուկներից մէկն էր մինչ այդ հայկական կապիտալը, գաղար էր տուել իր կանոնաւոր գործառնութիւններին. այս մտքին պէտք է ընտելանար նոյնիսկ հայ առևտրականի քաղաքական բարեյուսութիւնը։ Հակամէտ ոյժերի և ազդեցութիւնների այն ժխորում, որ ստեղծուել էր երկրի մէջ չնորհիւ զինուորական-քաղաքական ուժեղ ցնցումների, հայ վաճառականը ևս պէտք է շտապէր գտնել իր գոյութիւնն ապահովող նոր յենակէտներ, յարէր տիրող հոսանքներից մէկին կամ միւսին. նա պէտք է դուրս գար քաղաքական անդորր ու անվրդով մտայնութեան ապահով շրջանակներից, որդեգրուէր նոր ազգեցութիւններից մէկին ու նրա ներշնչամբ նետուէր կոռի դաշտ։

Պարսկահայ վաճառականների մէջ Պետրոս դի Սարգիս Գիլանենցն առաջինն էր, որ ենթարկուեց ժամանակի այդ պահանջին։ Նա առաջինն էր հայ կապիտալի այն ներկայացուցիչներից, որոնք նետուեցին գործօն ազգային քաղաքականութեան դիրկը։

*) Տես. Մ. Գ. Ա. Մ. Ի. Դ. Դելա արմ. 1724, № 1-ի յաւելուածների մէջ գտնուող տետրակները։

Հետախոյզ խմբակ եւ նայկական էսկադրօն.

Մինաս վարդապետի յանձնարարութեամբ և ոռւս կառավարութեան գիտութեամբ ու ցանկութեամբ 1722 թուի ապրիլին, այն իսկ ժամանակ, երբ Աստրախանում պատրաստութիւն էր տեսնուում առաջիկայ արշաւանքի համար, Գիլանենցն իր տասը հաւատարիմների հետ գալիս է Պարսկաստան^{*)}: Նրան, ինչպէս երեսում է, յանձնարարուած էր տեղեկութիւններ հաւաքել այստեղ քաղաքական անցքերի մասին, այլ և իւր փոքրիկ խմբի միջոցով զինուորական հետախուզութիւններ կատարել Գիլանի շրջանում, այն երկրում, որ իր արդիւնաբերութեամբ վաղուց էր արժանացել ցարի առանձին ուշադրութեանը: Գործունէութեան կենտրոն ընտրելով Ռէշտը՝ Գիլանենցը բաւականացաւ իր ստականաթիւ մարդկանց աջակցութեամբը մինչև 1723 վերջերը. այնուհետև նրա խումբն աճում է և կազմում 80 հոգուց բաղկացած մի գումարտակ, որ յետագայում «հայկական անկանոն ձիաւոր էսկադրօն» անուան տակ կազմում էր Գիլանում գործող ոռւսական զնդի առաջապահ մասերից մէկը^{**)}: Կայ յիշատակութիւն, որ հայերն աւելի մեծ քանակութեամբ էին խմբուել ոռւս զօրքի շուրջը. սակայն տեղեկանալով, որ դրա մասին չը կայ յատուկ հրաման՝ նորից ցըւում են^{***}): Իսքը Գիլանենցը բարձր կարծիք էլ չունէր տեղական ոյժերի մասին. իր նամակում նա խնդրում է Մինաս վարդապետին «քանի լեվ բիլան տղէք» ուղարկել Ռէշտ, որովհետև «տեղս տղայ շատ կան ամայ բանի պետք չեն և . . . մոչ մեկն մեր ֆանդ չեն»[†]): Ինչպէս խուզարկու խմբի, նոյնպէս սկզբում նաև հայկական էս-

^{*)} ԹՅօՅՑ, անդ. №305, § 100 և «Ժամանակագրութիւն» № 133.

^{**)} Մ. Գ. Ա. Մ. Ի. Դ. Ջելա արք. 1725, № 1. ff, 2 ր—3 ր. և 9 ր.—հմմ. ԹՅօՅՑ, անդ. № 303 ու № 305 § 10. և Բուտկով. «Материалы для новой истории Кавказа, съ 1722 по 1803 годъ». СПБ. 1869, գ. I. ст. 57.

^{***}) Ջելա արք. 1725. № 1. fol. 13 ր.

^{†)} «Ժամանակագրութիւն», № 133. (էջ 210—11).

կաղրօնի պարենաւորման հոգան ամբողջովին ընկնում էր գործը կազմակերպողների վրայ ^{*)}), և ամենախոշոր զոհաբերութիւն անողն այդ ուղղութեամբ հէնց Պետրոս Գիլանենցն էր: Նա էր հայթայթում խմբի համար պատերազմական մթերքներ ^{**)}), նա էր, որ կերակրում էր իր միշտոցներով գրեթէ բոլորին. «Նրանց, որոնք չքաւոր էին մեր մէջ—գրում է Մինաս վարդապետին Գիլանենցի գործակիցներից մէկը—բոլորին էլ, ինչպէս գիտես, կերակրում էր ինքը պարոն Պետրոսը. ինչքան փող և ապրանք ունէր, բոլորն էլ ծախսեց ու շատ պարտքերի տակ ընկաւ, քանի որ եօթանասուն և չորս ձիաւոր էր կերակրում նա» ^{***}).

Կրելով այսքան ծանր զրկանքներ Գիլանենցն իր մարդկանցով կատարում էր ոռւս զօրքի համար կարևոր գործեր: «Ինչպէս քեզ յայտնի է, կարդում ենք Մինաս վարդապետին ուղղած նոյն գրութեան մէջ, շատ ծանր են տեղիս պայմանները, երկիրն անտառապատ և ճահճոտ՝ բացի ուրիշ անյարմարութիւններից (բարեւ). հետախուզութեան մասին եղած զինուորական կանոններով ոչինչ չէ կարելի անել այստեղ: Մեզանում օդն էլ վատառողջ է. օտարները չեն դիմանում այստեղ, իսկ մահմետականներն այնքան լաւ տեղեակ են այստեղի սովորութիւններին ու այնպէս գիտեն վարուելու եղանակները, որ երբեմն հարիւրով ջարդում են երկու հազարին, որովհետեւ տեղը խուլ է, և եթէ չըլինէր մեր հայոց զօրքը, յայտնի է Աստծուն, թէ ինչ ծուղակներ կը պատրաստէին մահմետականները» [†]).

Պատերազմական վայրերի խուզարկութեան նպատակով, այլ և տիրող տրամադրութիւններին և ընթացիկ լուրերին իրազեկ լինելու գիտաւորութեամբ՝ հայերը շփում և հաղորդակցութիւն էին պահպանում մահմետական ազգա-

^{*)} Անդ էջ. 209 և հետ. Ջելա արմ. 1725, № I. fol. 2r—3r. ՁՅՈՎԵ, № 305 § 10.

^{**) ՃԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ» 133, էջ 212.}

^{***) Ջելա արմ. 1725 № 1, fol. 11 v.}

^{†) Անդ, fol. 10 v.}

բնակութեան հետ *): Մարդիկ ուղարկելով ամենուրէք կամ հարցման ենթարկելով պատահող մարդկանց՝ Գիւլանենցն իրազեկ էր պահում գնդապետ Շիպօվին և Գիւլանի կառավարիչ Լեվաշեվին. այդ տեսակէտից էլ հէնց պէտք է մօտենալ նրա ընդարձակ տեղեկագրին, որ ըստ էութեան նրա ձեռնարկած գործի աչքի զարնող արդիւնքներից է: «Պէտք է զարմանալ, նկատում է Գիւլանենցի գիտնական թարգմանիչը, հեղինակի վարպետութեան՝ բազմաթիւ իրար հակասող տեղեկութիւններից արժանահաւատ փաստերն ընտրելու և նրանց բարեխղճօրէն գրի առնելու վրայ: Կասկածելի ծագում ունեցող լուրերին իւրաքանչիւր անգամ կցում է՝ ասում են, շը զիտենք, ծշմարի՞տ է արդեօք և այլն բառերը: Նրա հաղորդած գրեթէ բոլոր փաստերի վաւերացումը մենք գտանք կրուզինսկիի և Հանվէյի աշխատութեանց մէջ, որոնցից առաջինն ականատես է եղել (Սպահանի) պաշարմանը, իսկ երկրորդը գրել է վատահելի աղբիւրների և սոսկալի յեղաշրջման բոլոր շրջանները վերապրած մարդկանց պատմուածքների հիման վրայ» **):

Հարկաւ ոռւս բրիգադիրը սիրով էր ընդունում Գիւլանենցի մատուցած ծառայութիւնները և կրկին ու կրկին խոստանում էր զեկուցել դրանց մասին Պետրոս Մեծին ***): Ոռւս զինուորականների հետ յամենայն դէպս այնքան բարեկամական էին Գիւլանենցի յարաբերութիւնները, որ Մինաս վարդապետին ուղղած զրութեան մէջ նրան ողջոյններ էր ուղարկում դրանց կողմից †): Դժուար ի հարկէ նման փաստերի մէջ նշմարել գործի իրական գնահատութիւն: Հայերը յամենայն դէպս վստահութեան աւելի շօշափելի հաւաստիացումներ էին սպասում իրանց նոր տէրերից. նրանք չէին ուղում հասկանալ

*) Անդ. fol. 9 ր.

**) «Дневникъ» и. т. д. аռաջարան, էջ XXIII.

***) Անդ. fol. 11 ր.

†) «Ժամանակագրութիւն» № 133 (էջ. 212).

այն սիրալիք վերաբերմունքի խորհուրդը, որ նկատում էին ոռուսների մահմեղական ազգաբնակութեան հետ ունեցած յարաբերութեան մէջ: «Ծուս զօրքի մէջ, նկատում է այդ առթիւ մեզ ծանօթ նամակագիրը, մեզանից աւելի խելօք մարդիկ կան. բայց նրանք ընդունակ չեն ճանաչելու իրանց հաւատարիմ մարդկանց և հեշտութեամբ կարող են ենթարկուել ուրիշների խարէութեան»*): Հեղինակի ինքնասիրութիւնը շոյում է միայն այն կարծիքը, որ ունէին հայերի մասին մահմետականները. «Եթէ չը լինէին մեր մէջ հայերը,—այս խօսքերն է դնում նրանց բերանում նամակի հեղինակը,—եթէ ականատես չը լինէին նրանք մեր գործողութիւններին ու չիմանային մեր լեզուն, մենք վաղուց ջարդած կը լինէինք Ռուսաստանի զօրքերին»**): Նամակագիրը շեշտում է առանձնապէս, որ թշնամին քանիցս խոստացել է Գիլանենցին և իւր գործակիցներին մեծամեծ պատուանշաններ և նոյն իսկ առանձին իշխանութիւն՝ միայն թէ նրանք յետ կանգնեն իրանց ռուսասէր քաղաքականութիւնից: Սակայն Գիլանենցին չէ հրապուրել նրանց խոստումներից և ոչ մէկը ***):

Դէպքերի այս արձանագրութեան յետել թագնուած է յուսախար եղած հոգու դառնութիւն. Պարսկաստանում տեղի ունեցող քաղաքական խոշոր անցքերը պէտք է գային գեռ ընդարձակելու հայերի հիասթափութեան սահմանները:

* * *

^{*)} Ճելա արմ. № 1. fol. 12, v. Հայերը չը գիտէին ի հարկէ, որ ոռուսների սիրալիքութիւնը թելադրուած էր կառավարութեան կողմից և հետևանք քաղաքական փափուկ կացութեան: Հմմ. Բուտկովъ. I. c. I. 43, և հետ.

^{**)} Ճելա արմ. 1725 № 1 fol. 10 r.

^{***}) «и неоднократно мусульманы обещали дать великие чины и провинции, чтобы мы отстали от той службы, но нашъ господинъ Петръ того не принялъ и ни въ что вмѣнялъ». Անդ. fol. 10 v—11 г.

Թուս դիւանագիտութիւնը եւ հայերի ժաղաքական
տագնապը:

1722 և 1723 թուականների ընթացքում ոռւսները մերձկասպեան երկիրներում զրաւեցին Դերբենդը, Բագուն և Մեշտը: Նրանց տիրապետութիւնից դուրս մնաց այդ գծի վրայ վաճառաշահ Շամախին, որտեղ լեզգիներն էին ամրացել: Վրաստանն ու Հայաստանը սկզբից և եթ ոռւսների անմիջական մտահոգութեան ըրջանից դուրսն էին գտնւում: այդ երկիրներին տիրանալու համար պէտք էր ընդհարուել պարսիկների և, որ ամենադժուարն էր, օսմանեան թիւրքերի հետ: այդպիսի կոփւ մղելու համար ոռւսները ոչ ցանկութիւն ունեին և ոչ էլ, որ աւելի կարեոր էր՝ հնարաւորութիւն: Գրաւած երկիրներն էլ նրանք հաղիւ էին կարողանում պահել իրանց գէնքի իշխանութեան տակ: Զօրքի կանոնաւոր պարենաւորման խնդիրը, չնորհիւ հաղորդակցութեան միջոցների անզարգացած վիճակի, այդ տեսակէտից անյաղթահարելի դժուարութիւններ էր յարուցել նրանց համար հէնց՝ պարսկական արշաւանքի սկզբից: Նոր զրաւած երկիրներն արժէքաւոր էին իրանց բերքերով ու բնական հարստութեամբ, ամենից առաջ՝ որպէս նաւթի և մետաքսի արտահանութեան աղբիւրներ: սակայն այստեղ ոռւսները չը գտան այն, ինչի կարիքը նրանք առաջին նուագ ամենից շատ պիտի զգային՝ ուտեստի պաշար և պատերազմական մթերքներ, երկրի վատառողջ կլիման էլ իր կարգին քիչ մարդկային զոհեր չէր տանում ոռւս զինուորների և ձիերի պահեստից: Եւ պէտք է ասել, որ առանց այդ էլ զօրքի մէջ զգացւում էր ոչ միայն ապրուստի միջոցների, այլ և կոռուող ոյժերի պակասը: Իզուր չէր ոռւս կառավարութիւնն առանձին հոգ տանում հայերին և վրացիներին նոր զրաւած երկիրները գաղթեցնելու մասին:

Տեխնիքական այս անյարմարութիւններին աւելանում էին քաղաքական դժուարութիւնները:

1722 թուի հոկտեմբերին Աւղանները զրաւեցին շահերի

մայրաքաղաքը ու դրանով պսակեցին իրանց յաղթական արշաւը դէպի արևմուտք։ Շահ Հուսէին Սեֆին, որի պաշտպանութեան պատրուակով էին դիմել ոռւսները դէպի հարաւ, եղաւ գահընկէց, իսկ նրա ժառանգ Թահմազը՝ մի մարդ, որի արեգնափայլ անձնաւորութեան մէջ խտանում էր Պարսկաստանի քաղաքական ապիկարութիւնը միայն, մի կերպ քարշէր տալիս իր գոյութիւնը հիւսիսում, որպէս Սեփիդների վաղեմի փառքի անշուք խրզուիլակ։ Աւղանների յաջողութիւններից և ոռւսական ծրագիրներից անհանգստացած տաճիկ զօրքերի շարժումը դէպի արևելք ստանում էր խրոխտ լնթացք. նրանք ձեռք էին մեկնում Թահմազին և սպառնում էին իրանց թարմ զօրամասներով հեղեղել ամբողջ Անդրկովկասն ու Ատրպատականը։

Այսպիսի պայմաններում ոռւսները պէտք է դիւանագիտական բանակցութիւնները գերադասէին պատերազմական գործողութիւններից։ 1722—1724 թուականների ընթացքում նրանք շարունակ բանակցում էին գրեթէ բոլոր կուող կողմերի հետ՝ գրաւած երկիրները խաղաղ ճանապարհով իւրացնելու նպատակով։ Շահ Հուսէինի «պաշտպան» Պետրոս Մեծը բրիգադիր Լեվաշեվի բերանով 1723 թուի ամառը շնորհաւորում է աւղանների առաջնորդ Միք Մահմուտին Պարսկաստանի գահը բարձրանալու առթիւ, վստահացնելով, որ այս փաստը ոչ միայն հակառակ չէ իր կամքին, այլ նոյն իսկ հաճելի է իրան։ Ցարը յոյս է յայտնում միայն, որ նոր շահը չի մտնիլ տաճկաց հաղատակութեան տակ*): Միաժամանակ նա ուղարկում է իր գործակալներից մէկին ապստամբ հայերի մօտ, յուսադրելով, որ ինքը շատ տրամադրիր է և պատրաստ ազատելու նրանց անհաւատների լծից, միայն թէ հայերը համբերութիւն ունենան փոքր ինչ ու դիմադրեն թշնամուն մինչև ոռւս զօրքերն օգնութեան կը հասնեն**): Սակայն առանձին վստահութիւն չունենալով դէպի աւղանները և ոչ էլ

*.) Եյտկօվъ, անդ. I. և հետ.

**) Թզօվъ, անդ. № 229.

առանձին սպասելիքներ կովկասի քրիստոնեայ ազգաբնակութիւնից՝ նոյն թուի սեպտեմբերին ոռուները դաշն են կնքում պարսից դեսպանի հետ, որով մերձկասպեան երկիրների—Դերբենդն ու Բագուն իրանց շրջականերով և Գիլանի, Մազանդարանի և Աստրաբադի նահանգներով— փոխարէն խոստանում են, որպէս վաղեմի բարեկամներ, պաշտպանութեան տակ առնել շահ Թահմազին նրա բոլոր թշնամիների ու ապստամբ հպատակների դէմ^{*}): Եահ Թահմազը չը վաւերացրեց իր դեսպանի ստորագրութիւնը, առարկելով թէ ինքը կարիք չէ զգում դրսի օգնութեան. եթէ ոռուները, նկատում է նա, այդքան բարեացակամ և հոգատար են դէպի իր ներքին գործերը, թող ազատեն Պարսկաստանը իրանց զօրքերից և թոյլ տան միայն իրան լինելու իր երկրի տէրն ու տնօրէնը^{**}): Դեռ ևս այս վճռական մերժումին անտեղեակ, ոռուները, անտես անելով իրանց բարեացակամ տրամադրութիւնը դէպի իրանի շահը, բանակցութեան մէջ են մտնում թիւրքերի հետ, որոնք 1724 թուի ընթացքում գրաւել էին Խոյն ու Համազանը, իսկ Անդրկովկասում՝ Երևանն ու ամբողջ Վրաստանը: Նոյն թուի յունիսին ոռուները համաձայնութիւն են կայացնում թիւրքիայի հետ, որով ապահովելով իրանց մերձկասպեան երկիրները՝ թողնում են վերջինիս Ատրպատականն ու Անդրկովկասը^{***}): Թիւրքերին էր վերապահւում նաև Վրաստանի ապստամբներին ճնշելու իրաւունքն ու հոգսը[†]): Նման պարագաները չը խանգարեցին ցարի կառավարութեանը յետին թուով խմբագրած մի ամբաստանագրի մէջ ապստամբների կրած անյաջողութիւնները վերագրել նրանց դեկալար Վախտանգի դանդաղկոտութեանը^{†*}):

^{*}) Полное Собрание Законовъ Россійской Имперіи т. VII № 4298.

^{**}) Дневникъ Семена Аврамова. 1726—1729. М. А. Г. М. И. Д. Дѣла персидскія по реестру II, К. 85. № 14. passim.

^{***}) Полн. Соб. Зак. Росс. Имп. VII № 4531.

[†]) Անդ. յօդ. II.

^{†*}) «Переписка на иност. языкахъ грузинскихъ царей съ российскими государями». СПБ. 1861, ст. 183—9.

Յոյս դնելով ոռւսների տուած խոստումների վրայ, Անդրկովկասի քրիստոնեաները, անտեղեակ քաղաքական յարաբերութիւնների ընթացքին, հերոսական ճիգեր էին թափում իրանց դիրքերը ձեռքից չը տալու համար: Իզուր էին նրանք անվերջ նամակների և պատգամաւորութիւնների միջոցով հրաւիրում ցարի ուշադրութիւնն այն անել կացութեան վրայ, որ ստեղծուել էր նրանց համար շնորհիւ իրանց փութեան անվերապահ քաղաքականութեան. նրանք ձեռնարկել էին քաղաքականօրէն անշահաւէտ մի դործի ու, նեղուած լեզզիների, օսմանցիների ու պարսիկների յարձակումներից ու նրանցից լիովին բնաջինջ լինելու սոսկալի հեռանկարից, քամում էին դառնութեան բաժակը: Աւելի լաւ վիճակում չէր նաև Գիլանի հայոց գաղութը: Պատերազմի սկզբում տեղի ունեցած ընդհանուր թալանի շնորհիւ շատերը հաղիւ էին քարշ տալիս իրանց դոյութիւնը. պատերազմի շնորհիւ ապրանքների գները խիստ բարձրացել էին, սակայն ապրանք չը լինելու պատճառով առևտուրն ինքնին շահաւէտ չէր: Հայ առետրականի կարաւանները՝ ենթակայ էին անխնայ կողոպուտի, առետրական ճանապարհները՝ բռնուած թշնամու զօրքերով, տրամադրելի նաւերն ու ուղաերը՝ զբաղուած զօրքի ու պատերազմական մթերքների տեղափոխութեամբ *): Բայց այստեղ ևս վտանգուել էր հայ առետրականի տնտեսական բարեկեցութիւնից զատ նաև նրա քաղաքական բարեկուսութիւնը: «Հայր սուրբ, զրում է 1725 թուի սկզբին Մինաս վարդապետին նրա Գիլանի թղթակիցը, այժմ ամենուրէք յայտնի եղաւ՝ մեր բանը. այսքան տարի ոչ ոք չը գիտէր քո խորհրդի և գործունէութեան մասին, այլ և այն բանի մասին, որի համար դու այդտեղ (Թուսաստանում) ապրում ես: Ահա այժմ հինգ տարի է, ինչ մեր բանը յայտնի դարձաւ բոլոր դաւաճաններին և իմացան, որ դու այդտեղ ապրում ես նորին մեծութեան հրամանով: Մեզ հաւատարիմ մարդիկ այժմ իսկ կամենում են ծառայել նորին կայսերական մեծութեան հրա-

*) «Ժամանակագրութիւն» № 133, էջ 210 և հետ.

մանի համեմատ, և այդ յուսով այժմ նրանք կորած են և անզթօրէն գերի վարուեցին։ Ամեն տեղ անօրէնները աւելի են ուժեղացել և ոկտել են վասել թէ մեզ և թէ նրանց, որոնց վրայ մենք յոյս էինք դրել»^{*}։

«Ափսոս որ մեր ձենքն թամամ Նզբաշի երկիրն և Օսմանցու երկիրն յըռչակվեց՝ թէ ֆլան ֆլան Խայէրն Ըուռստի թագավորին դուլ ան դառցել՝ որ արունանիս ծըծում ան», — դրում է նոյն Մինաս վարդապետին Պետրոս Գիլանենցը — «Եթէ Աստուած մի արասցէ՝ մեզ մին բանի վերայ չը դրիր, որ մեզ ըռուսիսաթ ելավ՝ էլ կարել չենք էս երկրումն ման գոլ, որ թէ ձեռն ընկանք՝ մարդի պէս չեն ըսպանում շան պէս կը ըսպանեն»^{**})։ Անձի ապահովութիւն վնասողներին մնում էր՝ քաղաքական տիրող հովերի ուղղութիւններով փարել գաղթի փրկարար ճանապարհներին։ «Թարեղումու շարունակում է Գիլանենցը — մեր Հայոց ազկէն օվ փողայտէր այ՝ փախել այ՝ եկէլ էտ երկիրդ և որն գնացել այ Բաղդադ»^{***})։ Ի՞նչ էր սպասում հայ վաճառականին այդ օտար վայրերում։ Գիլանենցը շատ լաւ գիտակցում է այդ. «պիտի Ըուռստի երկրումն դար բէ դար մնանք, ում ունի՝ ուտի, ում չունի՝ ողորմութիւն բոլորի յանցկայ»։ †)

Լաւ չէր գնում նաև Գիլանենցի կազմակերպած գործը. նրա վրայ անդրադառնում էր տիրող տնտեսական տագնապը. Ուղարկելով Գիլանենցին Պարսկաստան Մինաս վարդապետը, ինչպէս երկում է, յանձնարարականներ էր տուել նրան տեղական հարուստների հասցէով, ուր նրանց նիւթական օժանդակութիւնն էր խնդրում հայկական խմբի գործին։ Սակայն հաղորդակցութեան խանգարման պատճառով այդ յանձնարարականները հնար չէ լինում տեղ հասցնել^{†*}). «Բատեղիս Խայէրն որ կան՝ — դրում է Գիլա-

*) Ճելա արմ. 1725 № 1. fol. 10 r.

**) «Ժամանակադրութիւն», էջ, 211.

***) Անդ.

†) Անդ, էջ, 212.

†*) Ճելա արմ. 1725, № 1. fol 11. v.

ՆԵԽԳԸ—մոչ մէկն մեզ օգնութեան պէտք չեկին, որ ոխչն էլ լալման ան՝ թէ թալանած անք՝ խեղջ ելած։ Ինչ ունենք՝ որ ձեզ ինչ օգնութիւն առենք և ուրիշ տեղած խոյ իսկի ումիդ չկայ. զբայ ոխչն էլ թալանվել ան և ճանայպարսներն կապ այ, որ նման չէ գիր աղարկելն, և մենք էլ մին ծախ տեղ անք ընկել, որ մոնչինչ կողմէ մեզ ՝ա օգնութիւն առող չկայ»։ «Էս օր ժ՞ղ, ամիս այ, որ մեր սօվուագարութենէն ձեռն անք վեռել, ՝ա ստակ գէլուր չունենք, դէյրի խարջելն։ Դեռ խարար չենք՝ թէ ինչ անք կամ թէ ինչ դառնալէց անք»։^{*)} Կրկին ու կրկին խնդրում է Գիլանենցը Մինաս վարդապետին, նրան, որի քաղաքական ազդեցութեանն էին ապաւինել Գիլանի հայերը, հոգալ ստեղծուած դրութեան մասին, օգնութիւն խնդրել հայերի համար, միսիթարական խօսք ասել նրանց։ «Էս օր մեր տէրն հրամանքդ ա—գրում է նա—պիտի որ մեծին յիմաց անես՝ մեր ֆիքրն ասես, մեք խազինի վերայ չենք, մին քանի թուման փող ունինք որ կերանք գնաց, յախիրն ինչպէս պիտի լինի»^{**)}։ Սակայն Գիլանենցը մտածում է ոչ միայն իր կազմակերպած գործի մասին. նրան անհանգստացնում է նաև այն նեղ վիճակը, որի մէջ գտնւում էր այդ ժամանակ անդրկովկասեան հայ գինուորութիւնը. «մեր հայոց ասկարն որ բոլորվել ան՝ գրում է նա—առում ան՝ թէ կ’ո մարդ այ, դ’ բոլկ ան, որ դ’ տեղ նստած ան՝ նոցայ մին աչքն Աստուծոյ լուսին այ, մին աչքն մեծ թագաւորին ճանայպարին այ՝ որ տիր շատ այ նոցայ դիշմանան պիտի՝ որ հրամանքը նոցայ ֆիքրն քաշես՝ որ մամամ Ղզլբաշն և Օսմանլուն նոցայ արընին յետհեն ան և նոցայ պատճառիւ ամենայն տեղի Խայէրն նեղութիւն ան քաշում»^{***)}։

Իր հայրենակցի աղերսանքները Մինաս վարդապետը յատուկ զեկուցազրերով հասցնում էր ի հարկէ Պետրոս Մեծի ականջին. բայց նրա այդ դիմումները, ինչպէս

^{*)} «Ժամանակագրութիւն» զջ 210 և հետ.

^{**)} Անդ.

^{***)} «Ժամանակագրութիւն» № 133, էջ, 209.

ինքն է գանգատւում իր մի գրութեան մէջ, մնում էին
անհետնամք *):

Ցարի կառավարութիւնը Պարսկաստանում ամենից
առաջ տարուած էր իր անմիջական գործերը շտկելու մտա-
հոգութեամբ։ Համաձայնութեան գալով Թիւրքիայի հետ՝
Ռուսաստանն այլևս պարտաւորուած պէտք է զգար իրան
չէզոքանալու անդրկովկասեան քրիստոնեաներին սպասող
վիճակի հանդէպ։ Հիւսիսից Կովկաս համնող քաղաքական
դժգոյն ու վտիտ խարրիկներն այսուհետև պէտք է այցե-
լէին հայ և վրացի հաւատացեալներին ի սպաս կրօնական
մխիթարութեան։

* * *

Գիլանենցի վերջին ջանեցը։

Կառավարութեան և նրա ներկայացուցիչների տար-
տամ ու անորոշ պատասխանները հայերի դիմումներին
յամենայն դէպս յուսահատութեան չը հասցըին Պետրոս
Գիլանենցին ու նրա ընկերներին 1724 թուի սեպտեմ-
բերի 24.ին Մոսկուայում ստացուած մի գրութեան մէջ
նրանք յայտնում են, որ պատրաստ են Գիլանում կուռող
հայերի թիւը հասցնել հազար հոգու, միայն թէ այդ իմաս-
տով հրաման լինի ի վերուստ **): Մի ուրիշ տեղ խօսք կայ
նոյն իսկ նրանց թիւը երեք հազարի հասցնելու մա-
սին ***): Միաժամանակ խնդրում են նրանք պետական
ոռձիկ նշանակել իրանց ու այդպիսով միջոց տալ հոգալու
մարդկանց ու ձիերի ուտեստի մասին †). Յետագայում
հայերը կրկին դիմում են Մինաս վարդապետին՝ ուղարկել
100 հաւատարիմ հայ, այլ և դրանց հետ՝ որքան կարելի է
«զինուրական արուեստի ու վարպետութեան մէջ վար-

*.) Ճելա արմ. 1725 № 1. fol. 2 v. § 12.

**) Անդ, § 7.

***) Անդ, fol. 9. v.

†) Անդ, § 8—11.

ժուած» ոռւս մարդիկ*)։ Գիլանենցը մտադրուել էր նոյնիսկ անձամբ զնալ Ռուսաստան զեկուցելու Պետրոս Մեծին թէ Պարսկաստանի ընդհանուր վիճակի և թէ հայերի մասնաւոր գրութեան մասին ու միաժամանակ այստեղից գործին պիտանի մարդկանց հաւաքել բերել Պարսկաստան։ **) Ռուսաստան անցնելու համար նա յոյս ունէր թոյլտութիւն ստանալու գեներալ Մատիւշկինից, որը շուտով պէտք է ժամանէր Ռէշտ Սակայն, երբ 1724 թուի դեկտեմբերի 24-ին Մատիւշկինը հասաւ այդ քաղաքը Գիլանենցն արդէն կենդանի չէր։

1725 թուին 17-ին յունուարի թուակիր գրութեան մէջ նամակագիրը յայտնում է Մինաս վարդապետին, որ Պետրոս Գիլանենցը, հայ գումարտակի «ալաշտալանն ու ուսուցիչը», սպանուել է ծառայութեան ժամանակ և, որ իրանք մնացել են առանց դեկավարի։ Նրա ընկերները խնդրում են վարդապետին գլխաւոր նշանակել իրանցից մէկին, կամ ուղարկել իր կողմից որ և է մէկին, որին նրանք և խոստանում են հնազանդուել ***). Միայն թէ նոր հրամանատարը լինի «լաւ և ազնիւ հայ, որպէս զի, քանի դեռ, ինչպէս լսում է, թշնամու ուժեղ բանակներից մէկի յարձակումը տեղի չէ ունեցել, միւսները, զրկուած դեկավարից, չը թերանան իրանց հաւատարմութեան մէջ» †). «Ինչպէս գու քո նամակներով Պետրոս դի Սարգսին էիր ցուցմունք ու յօրդոր տալիս,—դիմում է նամակի հեղինակը Մինաս վարդապետին—որոնց համաձայն նա մեզ էր ուսուցանում և պահպանում, այնպէս էլ մի թող այժմ մեզ» †*).

*) Անդ, fol. 10 v.

**) Անդ, f. 11 r. և 12 v.

***) Անդ, fol. 9 v.

†) Անդ, fol. 11 r.

†*) Անդ, fol. 12 r. Այս դիմումին ընթացք տալու համար Մինաս վարդապետը զնաց Պետերբուրգ, ուր նա 1725 թ. 19-ն օգոստոսի թուակիր մի գրութեամբ դիմում արեց Կատարինէ Ա. կայսրուհուն յօդուտ Գիլանի հայերի։ Տես ներկայ յօդուածի յառելուածը։

Լսելով այն մարդու ծառայութիւնների մասին, որը
բոլորի վկայութեամբ իր զինուորական գործունէութեան
ընթացքում «երբէք ձիուց թամբ չի վերցրել», գեներալ
Մատիւշկինն իր ցաւն է յայտնում նրա գործակիցներին։
1724 թուի նոյեմբերի 10-ին ստորագրուած կայսերական
ուկազով Մատիւշկինին հրահանգուած էր տեղ տալ Գիլա-
նում Ղարաբաղի և Ղափանի շրջանի հայ գաղթականներին
և նպաստել նրանց տնտեսութեան վերականգնմանը *):
Գնահատելով հայերի կատարած դերը՝ գեներալը գալով Ռէշտ
հրամայում է նաև ըստ կարելոյն մեծացնել հայ կուող-
ների թիւը. սակայն այդ հրամանը հնարաւոր չէ լինում
շուտով իրագործել, որովհետեւ Գիլանում քիչ հայ էր մնա-
ցել, իսկ դրսի հետ հաղորդակցութեան կապերը կտրուած
էին լիովին **). Անդրկովկասի հայերն էլ, ինչպէս յայտնի է,
չը հետեւեցին կայսերական հրաւէրին ու շարունակեցին
մնալ իրանց երկրում։ Երեսում է, որ քաղաքականօրէն յու-
սախարուած հայերի համար պատերազմը կորցրել էր ար-
դէն իր նախկին հմայքը։ Այդ տեսակէտից խիստ բնորոշ
է Գիլանի հայ խմբապետի դիմումը Մինաս վարդապետին՝
միջնորդութիւն յարուցանել, որ հայերին ևս թոյլ տրուի
թալանել և գերեվարել թշնամուն, ինչպէս այդ մահմետա-
կաններն են անում. «Դրանով, շարունակում է Մինաս
վարդապետի թղթակիցը, մեր գօրքերը կարող են շահա-
գրգռուել։ ճակատուելու թշնամու հետ. բացի այդ, մու-
սուլմանները, տեսնելով մեր թուլութիւնը, այն, որ մենք
չենք կողոպտում և չենք գերեվարում նրանց, աւելի յան-
դընօրէն են յարձակւում մեզ վրայ»: ***)

Մատիւշկինի գալուց յետոյ հայերը՝ նրա հրամանով՝
մասնակցում են 1724 թուի գեկտեմբերին Գիլանում վեր-
սկուած պատերազմական գործողութիւններից երկուսի
մէջ և վարձատրւում իրանց քաջագործութիւնների համար։
Առանձին ուշադրութեան է արժանանում Պետրոս Գիլա-

*.) Ձևով, անդ. № 259.

**) Ճելա արմ. 1725, № 1, fol. 9 ր. fol. 13. ր. ր.

***) Անդ. fol. 12 ր.

նենցի հաւատարիմներից Աղազար անունով մէկը, որը ստանում է ուստիստրի և հայկական էսկադրօնի հրամանատարի աստիճան։ Աղազարը՝ յետագայի Լազար Խրիստափօրովը՝ ոռւս գեներալի աստիճան ստացող առաջին հայզինուորականը, եղաւ այսպիսով Գիլանենցի սկսած գործի շարունակողն ու դեկավարը։^{*)}

* * *

Պետրոս դի Սարգիս Գիլանենցն անշուշտ մէկն էր ժամանակի եռանդուն և արգասաւոր հայ քաղաքական գործիչներից։ Ճիշտ է, նա ապրեց գաղութային հայութեան մէջ, սակայն նրա գիտակցութեան մէջ անդրադառնում էր պարսկահայ ընթացիկ կեանքն իր ամբողջ ծաւալով։ հայկական էսկադրօնի հիմնադիրն ու դեկավարն ապրում էր «հայոց ասկի» փրկութեան համար մտահոգուած «հայոց ասկարի» կեանքով։ Ո՞ւնէր նա արդեօք ազգային-քաղաքական խնդիրների մասին իր մշակուած ծրագիրը՝ չգիտենք. գիտենք միայն, որ գործնականի մէջ ԺԷ դարի քաղաքականորէն մտածող ու գործող խոշոր հայ առևտըրականների նախահայրն է նաև Եւ եթէ յիշենք, որ սրանցից միայն նա ընկաւ հայ ազատագրական պայքարի մէջ՝ այն ժամանակ կը լինի նա և միակ իսկական զինուորը հայկապիտալի քաղաքական պատմութեան ամայի դաշտում։

Ա. Յովհաննիսեան

ՅԱԿԵԼՈՒՄԾ

Մինաս Վարդապետի զեկուցումը Կատարինէ Ա. կայսրուհուն Գիլանի հայերի մասին^{**})։

Թ՛-վ ոճ-հդ օգս-տս ժ-թ

1. Թ՛-ը եղումս լսումենք որ ա-մ կող-մնէ իմց-լեն որ հա(j)ըն

^{*)} Անդ. fol. 11 v. և Էզօվէ № 303, 304, 305.

^{**) Ներկայ վաւերագիրը կազմում է Մ. Շ. Ա. Մ. Ի. Դ. Ջելա արք. 1725, յան.-իուլ. № 4-ի գործի ff. 27 r—28 v. նոյն գործի ff. 54 r—}

թ՝ զի շրի տկումն են և հիմիկս այլազգիքն ամեն կողմանէ կոխվ գ՝ լիսեն մեր ազգի վ՝ ը շ՝ անդութ՝ ք՝ շումեն թուրքից և ա՝ այլազգե՛ց. և ՝ ամէ որ մեր ազգն մեծ (ձ) իմփոյթօռի ուստիւն և հրման հնազնութիւննեն և յոյս ունին որ մեծ թղրէն ողբմութ՝ լինի իւրնց:

2. Հիմիկս ձէն կ՝ յ և մ՝ ըդ մէջ անկուլ որ հ՝ յըն խզպ՛շի հետ մին դ՝ ոնն շ՝ տ ինքմեն խոստ՝ ցլ թէ մեծութիւն թէ խ՝ զնա որ ինչպէս ուղեն՛ն այնպ՛ս առնեն. մեր ազգն անշութ մեծ թ՝ զի ուստին վ՝ ը հստա կ՝ ն կ՝ պծեն, Ա՝ ծ մի արսցէ եթէ դ կողմից անօրէնքն գնան չեն դիմն՝ լ. վ՝ ս էս պ՝ տճառիւ ու թ՝ զի չունին կ՝ մ խ՝ զնյ ճէպախնյ (для того что ни главы ни казны ни артилерии не имъютъ). ո՝ պ այս չ՝ փ ժ՝ մկ որ կոխվ տ՝ լիս են ա՝ ծ է ն՝ ց պ՝ հպ՝ ն մինչ այսօր. այլ ո՝ ըյ եթէ մին ողբմութ չի լինի մեծ թ՝ զրէն մեր ազգն չեն կ՝ րել դիմն՝ լ որ տուշմնն շ՝ տցերէ ին՝ պս ձեր մեծութ յ՝ տէ. յետոյ ձեր զօրցնլ շ՝ տ դժվրութ կու լինի ա՝ ոնց ն՝ ց. զէրն այն յերկրների ը՝ լնիքն և ինչ ս՝ հմնքին գիտկեն. թ՝ րեղումս անօրէնքն ա՝ մ տեղիք իւրնց հմխոհուք բերթ և ճն՝ պրհերն ըսկալ կու կ՝ պեն (нынѣ противъ всѣхъ своихъ непріятелей по дорогами пути пресѣкли по положенію и обыкновенія таможныхъ мѣстъ)

3. Եւ այլ կիւնու եկ՝ ծ գիրն յ՝ տէ ձեր մեծուե՛. որ էն քն՛ի մըդ՝ իքն էն տեղն կան. Ամենն մեծ պեղ՝ ըկնին իւրնց առնտրին ձեռ վեր առին և թ՝ զի ծ՝ ոյութե են ա՝ ոնց տօնլդ ինչպս ձեր մեծուե յ՝ տէ որ էլ փող չի մն՝ ց ամենն պ՝ րտքօվ մեծ թ՝ զին խոլողի միջումն են մինչ այսօր. Յերփ ճնտուլ մաթուշկն հանիլն մին ս՝ կւ օգնութի արերէ ինչպս յաղէ ձե՛րմ մեծուե:

4. Եւ այլ ովոք մեր ազգէ որ մեծ թ՝ զի լոյս անունն լսումեն դալիսէ կիլան ինչ ապ՝ ընք վեր դնում է. ինքն մեծ թ՝ զի սիրուն գնումէ կոխւ և իւրնց մահն չեն ափսոս գալիս որ լինի ա՝ վ յ՝ դիտեն դտ՛շմնն որ թ՝ զի անունն բձ՝ ընյ և տուշմնն հ՝ լծի, ինչ խ՝ զնյ կ՝ մ էրաղ որ ձեռէ ընկնում իւրնց չեն տ՝ լիս:

5. Եւ այլ թ՝ րեղէս յեռ՝ ջ կիւնյ մին գիր արել ինչպս ձեր մեծուե յ՝ տէ. և էլ էն գրումն գ՝ ըծէ թէ այդ կողմից մեր ազգէ ք՝ նի որ պահ՝ մ կու դա կովի սէր հւ՝ տլի մը՝ դ և թ՝ զի հ՝ ըմնան

55 г. դտնում ենք սրա ողուսերէն ազատ Թարգմանութիւնը. հայերէն բնագրի դժուար ըմբռնելի դարձուածքների հանդէա դնում ենք Թարգմանութեան համապատասխան պարբերութիւնները:

հետ բերես զերն մեր աղքէ ք՛նի շ՝տ լինի թ՛րի է որ ինչ տեղիք գն՛լն թ՛ղի զօր՛ցն մին կողմէնէ խ՛ֆիւ պ՛կսու՞ի չի հանդիպի որ լինի մեզ ամօթ.

6. Եւ այլ իմ խնդիրքն այսէ մեծ թ՛գրէն երբ մեր հ՛յերն որ կովումն ինչ ձեռ ընկնի իւ՞րնց լինի ճեպխանէն ի զատ (քրոմք արտիլերի). զէրն փողի և ինչ ապ՛ընց սիրոյ սրտով կոփ կու մ՛տնն և օվ ոք որ լսէ սէր առ՛լ ամէն կողմէ ուժ առ՛լ կուզ՛ն բզմնն, ինչպս անօրէնք անողմէնք մեր ազինքն թ՛լնում և գերի վ՛րեց, այնպէս հ՛ըմն լինի թգրէն որ ինչ զինվոր ինչ թլ՛ն և գերի ա՛ռլն իւրն լինի. ինչպս որ անօրէնքն այնպէս թ՛լն առնելով զօր՛ցն, երբ մեծ թ՛գրէն ա՛յսպս հրմն տ՛յ թ՛զմ մ՛րդիք պահամ կու լինի և մ հկոկց դէմ պահպն (то много сыщепа, а что приказано будеть оставять то можно остав(л)яты.)

7. Եւ այլ թ՛րեղէս յեռ՛չ անչ՛փ խնդ՛րլս թէ կան՛ցլրումն թէ կապինէթումն էն իմ խնդիրք բ՛ներին ճու՞ղն քեխի՞ց և անտոն փօփին հետ ուղ՛րկերէք. ապ՛յ ձեր մեծու՞ն յ՛տէ որ այն կողմի ճնպրհերն կ՛պէ. մինչ այսօր խա՞ր չկ՛յ ած գիտէ թէ ողչ են թէ մեռ՛ծ. ապ՛յ կը խնդրեմ մեծ թ՛գուհուդ ինչպս ողմէն ճոգի լոյս թ՛գն ողորմու՞ի արեց յեստի յեռ՛չ հրմն՞ւ այն կողմն մ՛րդ ուղ՛րկեց որ շ՝տ ու՞րխու՞նի եղեւ ն՞ց. կրկին կու խնդրեմ մին հրմն նշն տ՛յ որ մէ՞լմ անենք այն մերայնոց որ չի յուսահտին. զերէ որ թ՛գրն առ ա՞ծ փոխփոխեցւ (sic!) կու լսեն շ՝տ տրտմու՞թ կու լինի ն՞ց կու յուս՞յ հ՛տին ն՛ը հ՛մը թգոհէն հրմն ն՛շ՞ն կու խնդրեմք որ լուսյ հոգի թ՛գին խոստց՛լն և անչ՛փ աշխատնք զուր չի կօրի և իւր յիշտ՞կն մն՛յ յւիտ՞ն որդոց որդի. և մերո ք՛նի դարվա չը՛չ՛ընք և նեղու՞ին զուր չի կօրի և մերս հոգոյ մեղք լինի. զէրն մեղք ն՞ց մեծ կ՛յաերի ՝ոյ շինու՞ն և ք՛չու՞ն թ՛րու՞նի աւելօք ծանուցեր եմք հնպ՞ղ որ ն՞ք անշը՞ժ կան ի սէր թգւրին. և բազմապ՞տիկ հ՛րսթ (sic!) կ՛յին տեսնել և ճշմտու՞ր ծո՞ել մեծի վը՞քյի:

8. Եւ այլ թ՛վ 1701 այն ոմն՛ցնէ խորհրդի նշնօվն եկինք մեծ իմփեռ՞յթօռի դուլուղումն մեծ իմփէռ՞յթօռն զմեզ ընդունեց և իւր թ՛րի շղվթօվն պ՛հեց մինչ այսօր. որ մեքլ իւր ինչ հ՛րմէ բանին ճ՛շմտու՞ր կու ծո՞յեաք ինչպէս ձեր մեծու՞ն յ՛տէ. Ա(j)լ տ՛յ Ա՞ծ մեր մեղ՞ցն թ՛րկ՞ցւ որ մեր մեծ սհապ ինփէռյթօռն առ ա՞ծ փոխեց՞ւ կ՞մքն ա՞յ է. ինչպս որ այն լոյս թգ՞րին ինչ հրմնին կ՞տրլ սիրով հ՛նզանդէ՞ք նոյնպէս հ՛նզնդեմք մեծագունեղ իմփեռ՞յթօռից մեծ թգուհուն կ՞տրին Ալքսեվնյ և իւր թ՛րի

յիշտկցն. ինչպէս որ իւր տէր լոյս թգրն զմեղ իւր շաղվթօվն պահելէ կու խնդրեմք մեծ՝ յգունեղ թգունուն որ նոյնպէս իւր շղթ ողորմութենն մեղ վերէն պկս չոնէ մեղ և մերանոցն. որ ինչպս մեծ իմէռ՝ յթօռն իւր սէր առու կմւն առջի այց. ևս մը գկն ուխտ՝ լէ զ' յն հ'յոց ուխտն կտրել թէպէտ յեռջ այս խորհուրդն ծածուկէր միան կարծիք կ'ոնէին. Այսօր կ ամէ որ ամմ ազգի հոչկ' լ յ'տնի եղկ որ այլ հն'ր չէ ինչ հն'րիւ ծածկել կ'մ բնկան ճշմտ խ'ղուի առնել. Ահ մեծ շնկն ձեր մեծուն որ զայն ուխն կտ'րել. զէրն այս երկրի տիրոչ հ'կոկորդքն ամէն կողմնէ անթիւ է աներեւութարար. եթէ այց ուժովն ջանք գնէք որ այն ը ազգ վր'ցի և հայք որ ձերմ թգրե ծոյուն պահէք ակ' ամ հկ'ոկորդքն միջակտուր ամօթի լինելոցեն որ այն ամ հկոց. զուռ և թյոյերն (sic!) ըստ իւրաք'նչիւր սէնթի կողմն կուպահեն. որ ձեր զօրց և յերկրի պկսութի չի հանդպիր ավ. ինչպս որ այսօր խ'յրթ և եղթիւրուն ձերմ թգրուն. և եթէ այն ը ազգն ձոռ'ց գ'նն այլ յետոյ հ'նրք չէ տնջունի լինիլ. որ այսօր հ'ոլ ն'ց վաղջանն. և եթէ հոգի հ'նէ այլ ոչ դ'ոնց. ի նոյն. որ ն'ք բոլորօվին ամէնն սէնթ աներեւութարար իւրնց ինչ պէթ'կկն զօր'ց թէտէրուքն կու լցուցնեն:

9. Եւ այլ աս'տի յ'ոջ որ ևս թգի հրմնւն խզլպաշն գնցելի յ'տնի ելաւ որ օսմանլուն և բուխ'րու հաճիք ը միմիայնս խօսք տուն որ իւրնց կողմ մեզէն տէրէ. Աստր'պտ և ինչ պի'տնի տեղիք բերթք և նաւք հստ'տեն և ճնպր'քն կ'պեն որ ինչ ուրիշ ազգ ֆո'նկ կմ ուռուսք փութփար'զք թախիխ կու զան համ ձեր երկիրն քն'տի կ'մ մեղ ամէն կողմէ զարր և անհնպունի. սիրով միարան լինիք ամ սունիք որ մերո մահմէտակն'ց փութ փր'զ ն'ցէ ձեղ և մեղ պկսունի չի հանդիպի թէ ծօվէ թէ ցմքէ. (... и извѣстился тамо что турки съ бухарцами согласились по перегу Каспийского моря около Мазандарана, Астарабата и прочихъ угодныхъ мѣстахъ построить крѣпости и сдѣлать каабли. И до роги пересѣчъ дабы изъ другихъ странъ изъ Россіи пріѣздъ прекратить ибо де когда иноземцы и россияне въ тѣхъ мѣстахъ усилятся то бухарянъ будутъ разорять такожъ и имъ туркамъ не безъ опасности будетъ. И для того де надлежитъ намъ по единоверію быть въ согласіи и чтобы намъ не было разоренія какъ моремъ тако и сухимъ путемъ.)